<<ՏԱԹԵՎ>> ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Համակցված (ինտեգրված) դասը կրթսեր դպրոցում

Առարկա՝ Տարրական կրթություն

Երևանի Գրիգոր Բաղյանի անվան հ. 141 հիմնական դպրոց

Ուսուցիչ՝ Կլեկչյան Լուսինե Լևիկի

ԵՐԵՎԱՆ 2023

Բովանդակություն

1. Ներածություն----------3
2. Ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը տարրական դպրոցում----------4-14
3. Եզրակացություն----------15
4. Օգտագործված գրականության ցանկ----------16

Ներածություն

Ուսուցիչը միշտ ձգտում է ուսուցանվող նյութը մանրացնել , մասնատել, բաժին-բաժին մատուցել այն դեպքում , երբ երեխային այն ընդհանուր և ամբողջական է հետաքրքիր: [1]
Լ.Ն.Տոլստոյ

Դեռևս Սոկրատեսը և Պլատոնը քննարկել են ակտիվ աշակերտի թեման , հատուկ նշելով , որ ուղղակի <<տրված>> գիտելիքը հազիվ թե կարող է մտավոր առաջընթաց ապահովել: Ենթադրվում էր , որ աշակերտը պետք է հայտնաբերեր համընդհանուր, համաշխարհային նշանակության գիտելիքը: Համաձայն այս փիլիսոփաների ՝ կրթության նպատակն է կերտել ճիշտ եզրակացությունների հանգող, ճշմարտությունը ձևակերպող , այսինքն ՝ արդեն գոյություն ունեցող վերջնական եզրակացությունները չընդունող պրպտուն միտք : Նրանք շեշտը դնում էին աշխատանքի , մտածողության և ակտիվության եղանակի վրա: [2]

Ներկայումս հասարակական կյանքի բոլոր բնագավառներում տեղի ունեցող ինտեգրման գործընթացները չեն կարող <<անտարբեր>> անցնել դպրոցի կողքով:Դպրոցի միկրոաշխարհը պիտի համապատասխանի այն աշխարհին ուր ապրում և գործում է աշակերտը:Կրթության բովանդակությունն առանձին առարկաներից պատրաստի գիտելիքների ամբողջություն չէ: Այսպիսի ընկալումը չի համապատասխանում ժամանակակից պահանջներին և աշխարհի մասին մասնատված, ոչ ամբողջական պատկերացում է տալիս:Այս խնդրի հնարավոր լուծումներից մեկը ինտեգրված ՝ միասնացված , ուսումնական և թեմատիկ ծրագրերի, դասընթացների ու պլանների ստեղծումն է:Երևույթների ընկալման, գիտակցման ու ըմբռնման առումով այսպիսի միասնական մոտեցումը հնարավորություն է տալիս նվազագույնի հասցնել ավանդական առարկայական մոտեցումը, հնարավորություն է տալիս նվազագույնի հասցնել ավանդական առարկայական ուսուցմանը բնորոշ գիտելիքների աղճատվածությունը, առարկաների ինքնորոշվածությունը, միջառարկայական կապերի բացակայությունը: Ավանդական առարկայական ուսուցումը խանգարում է աշխարհը տեսնել ամբողջական, ընկալել դրանում առկա բազմապիսի կապերը, փոխհարաբերություններն ու փոխազդեցությունները: Այսօր շատ երկրներում <<առարկաների ինտեգրումը>> և ինտեգրված ուսուցումը նպաստավոր միջոցներ են ուսուցումն արդյունավետ և <<կյանքի վրա հիմնված>> դարձնելու համար:[3] Այսպիսով մեր աշխատանքի նպատակն է համաշխարհային փորձի ուսումնասիրության և կատարած սեփական հետազոտական աշխատանքի միջոցով ցույց տալ ինտեգրված ուսուցման կարևորումն

[1],[3] Նախաշավիղ 5-6 2007 , էջ՝ 57-58

[2] Նախաշավիղ 3-4 2001 , էջ՝ 11

ընդհանրապես դպրոցում՝ սկսած կրտսեր դպրոցից: Աշխատանքը կատարվել է կրթության ոլորտում ինտեգրման արդիական և օպտիմալ լուծումներ գտնելու համար:

Ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը տարրական դպրոցում

Կրթական համակարգում շարունակաբար կատարվող բարեփոխումները պահանջում են նոր մեթոդոլոգիական մոտեցում կազմակերպչական և բովանդակային նշանակության խնդիրների լուծման ժամանակ , որը կնպաստի կրթության որակի բարձրացմանը: Կարևորելով ուսումնական գործընթացի ճիշտ կազմակերպման նշանակությունը , ինտեգրված ուսուցման մասին դեռ իրենց ժամանակին գաղափարներ են արտահայտել մի շարք մանկավարժներ Կոմենսկին , Պեստալոցցին և այլոք: Ժամանակակից մանկավարժության մեջ ինտեգրված ուսուցումը ներկայացվում է նոր դիտարկումներով: Այն իր բնույթով զարգացնող է բովանդակությամբ՝ բազմաբաղադրատարր, որը ներառում է թե՛ զարգացման սահմանափակ հնարավորություններ ունեցող սովորողներին, թե՛ միջառարկայական կապերի կիրառումը, թե՛ բազմահամակազմային դասարաններում իրականացվող գործընթացները:

Կրթության ինտեգրման գործընթացները բավականաչափ բարդ երևույթներ են և պահանջում են մանկավարժական և հոգեբանական տեսանկյունից լուրջ վերլուծություններ:Ինտեգրման հիմքով ուսուցման հիմնական նպատակը շրջապատող աշխարհի մասին ամբողջական պատկերացման ձևավորումն է , որը կապված է սովորողների մտավոր ակտիվության բարձրացման հետ:

Այդ պատճառով էլ դպրոցականներին պետք է տալ ոչ այնքան կոնկրետ (առարկայական) առաջադրանքներ, որքան ձևավորել ճանաչողական մտածողության այնպիսի որակներ ինչպիսիք կարող են նպաստել աշխարհն ամբողջության մեջ տեսնելու, ընկալելու, նոր կարողություններ՝ գնահատելու, դրանք ինքնուրույնաբար գնահատելու և վերլուծելու կարողությունների արմատավորմանը: Աշխարհի ամբողջականության սկզբունքը պահանջում է ընտրել կրթության այնպիսի բովանդակություն, որը կօգնի երեխային՝ վերստեղծել և պահպանել աշխարհի միասնական պատկերը, ապահովել առարկաների ու երևույթների միջև տարաբնույթ կապերի գիտակցումը, միևնույն ժամանակ նույն առարկան տարբեր կողմերից տեսնելու կարողության ձևավորումը:Դրանով վերականգնվում է սովորողների աշխարհաճանաչողության բնական գործընթացը:

Երեխայի ճանաչողական գործունեությունը հնարավոր է միայն այնտեղ , ուր նրա զարգացման համար ստեղծված են համապատասխան և որոշակի պայմաններ:

Նախկինում մեր դպրոցներում դասավանդումը սահմանափակվել է դասերի կրկնությամբ, լավագույն դեպքում՝ հասկանալով թե ինչ են կրկնում, այսինքն դպրոցը դեռևս կարող է հաղորդել դպրոցական ինչ-ինչ առարկաների մաս կազմող գիտելիքի և հմտությունների որոշ խմբեր և ճյուղեր , սակայն ոչ համակարգեր: Մինչդեռ երեխաները դպրոցում պետք է ստանան արդի ժամանակներում ապրելու և աշխատելու համար անհրաժեշտ բազմաթիվ գիտելիքներ ու հմտություններ:

Այս իմաստով հսկայական դեր ունի ուսուցման բովանդակության ,ձևերի և մեթոդների ինտեգրումը:Այն ենթադրում է ոչ միայն տարբեր առարկաներից գիտելիքների , այլև ուսուցման տեխնոլոգիաների և մեթոդների միասնացում :

Ինտեգրված դասը ժամանակակից մեթոդիկայի նորույթներից մեկն է : Նրա միջոցով արտահայտվում են միջառարկայական կապերը: Այն կարելի է անց կացնել տարբեր առարկաներից : Ինտեգրված դասերը միավորում են տարբեր առարկաների մասնագետների ուժերը և ստեղծում միջառարկայական կապերով հարուստ դասերի օրինակներ: Իհարկե, ինտեգրված դասերը բազմակողմանի գիտելիքներ են ապահովում , հետաքրքիր ու բովանդակալից են դարձնում ուսումնական գործընթացը: Ինտեգրված դասերը հանրային կրթության ձևերից մեկն է :Այն իրականացնելու համար պահանջվում է նախապատրաստական լուրջ ջանքեր, սակայն փորձը ցույց է տվել, որ այդ դասերի արդյունավետությունը բավականին բարձր է : Հիմնականում երկու փոխկապակցված առարկաների դասի ընթացքում ունենում ենք աշխատող, ներդաշնակ սովորողներ: Որո՞նք են ինտեգրված դասի առավելությունները, և պե՞տք է այսօր սովորողին դասաժամի այդ ձևը: Ինտեգրում ասելով նկատի ունենք տարբեր առարկաների , ուսումնական նյութերի մեջ մի ամբողջություն՝ փոխադարձ իրար լրացնող՝ և՛ իմաստով , և՛ ձևով: Այն չափազանց գրավիչ ձև է սովորողների համար, սովորողին տալիս է լիարժեք պատկերացում նյութի վերաբերյալ: Դա երկու նյութի խաչմերուկ է , որին հետևում է վերելքը , ապա՝ գագաթը՝ նպատակային դասը:

Այս երկու դաշնակից սուբյեկտների ներկայացումը տարբեր փուլերում հաջողությամբ է ավարտվում : Ինտեգրված դասերը հզոր խթան են հանդիսանում սովորողի հոգեկան գործունեությունում : Սովորողները սկսում են վերլուծել, համեմատել, որոնել երկու օբյեկտների ու երևույթների միջև կապը: Այն հոգնածությունը , ձանձրույթը, որը սովորողների մոտ նկատվում է միանման դասից վերանում է . այս դեպքում դասը առաջացնում է հետաքրքրություն , աշխուժություն: Ինտեգրված դասերը հաճախ ուղեկցվում են բացահայտումներով ու հայտնագործություններով, առաջ է գալիս ստեղծագործականությունը, հետազոտական աշխատանքը: Բացի վերը նշվածից , այս տեսակ դասերը ստեղծագործ ուսուցչին հնարավորություն են տալիս հասնել նոր մակարդակի, բացահայտել իր համար տեղեկություններ, մտնել նոր փուլ,

իսկ սովորողներին ՝ զարգացնել ստեղծագործական մտածողությունը, ինքնակրթվելու հնարավորություն ստեցծել: Ընդ որում , ուսումնական նյութերը պետք է լինեն մատչելի , ոչ ծանրաբեռնված , դասարանում ուսումնական գործընթացը պետք է համապատասխանի սահմանային ծավալին: Սովորողը պետք է ստանա այնքան տեղեկություն , որ չխճճվի նյութերում:

Ինտեգրված դասը սովորաբար նախապես պլանավորվում է : Դա անհրաժեշտ է և համապատասխանում է ուսումնական ծրագրին , պատրաստակամություն է այլընտրանքային դասի: Հաճախ դրանք դասեր են ՝ ինտեգրված ըստ թեմայի ընդհանրացումների և գիտելիքների ամրապնդման : Կրթության ժամանակակից կողմնորոշումը սերտորեն կապված է համակարգչային և ժամանակակից տեխնոլոգիաներին: Այնպես որ դասերը միանշանակ ինտեգրված են համակարգչային գիտությանը , որով ամրապնդում են նոր գիտելիքները անհատական համակարգչային ուսուցման համար: Ժամանակակից սովորողները մեծ հաճույքով են աշխատում համակարգչով , որն էլ դասը դարձնում է հետաքրքրաշարժ: Միասնական դասի նախապատրաստությունը սկսվում է դասի մանրամասն պլանը կազմելով: Փուլ առ փուլ, քայլ առ քայլ ընթանում է դասը: Յուրաքանչյուր փուլ ցույց է տալիս՝ ինչպես ճիշտ օգտագործել ժամանակը: Դասի վերջում բոլոր սովորողները պետք է ինքնուրույն բացահայտեն այդ միջառարկայական կապը , նպատակը: Ուսուցչի նպատակն է սովորողին ուղղորդել, սովորեցնել հետազոտել, ստեղծագործել, որոնել, դասը յուրացնել հետաքրքիր ու ոչ ստիպողական մեթոդներով : Այսպիսով, ինտեգրված դասը դառնում է նաև գրավիչ դերախաղ, սեմինար, քննարկում և ոչ թե գիտելիքների ծավալի խցկում:

Այսօր մանկավարժությունը հակված է մտածելու , որ նմանատիպ դասերը սովորողի՝ մարդկային դրսևորման հիմք կարող են հանդիսանալ: Այն նպատակ ունի նաև ուսուցչին օգնել հարմարվելու վառ, աշխույժ, անհատական հետաքրքրություններով լի սովորողին:

Ինտեգրված ուսուցումը հնարավորություն է տալիս հասնել ուսուցման ավելի բարձր նպատակների իրականացմանը և արդյունավետության բարձրացմանը : Դրանք են՝ ստացված գիտելիքները նոր իրավիճակներում կիրառելու կարողությունները , նոր գիտելիքների որոնման և յուրացման համար համապատասխան շարժառիթների ձևավորումը և, վերջապես, գիտական համակարգվածությունը , որը հիմք է գիտական համադրության վերլուծության համար: Սա ուսուցման բարձրագույն նպատակի ՝ նորի ստեղծման ուղին է : Այդ արդյունքը ստացվում է այն դեպքում , երբ տարբեր առարկաների ուսումնական նյութերը միավորվում են նպատակային ձևով: Այդպիսի միավորումներն ապահովում են միջառարկայական և ներառարկայական ճկուն կապեր և հնարավոր դարձնում ուսուցման գործընթացի միասնական համակարգված ու համալիր մեթոդաբանական մոտեցման իրականացումը:

Ինտեգրումը ուսուցման կարևորագույն սկզբունքներից է : Դրանով հնարավոր է առաջ քաշել վարկած՝ նոր կրթական հարացույցի մասին: Գոյություն ունեցող առարկայակենտրոն ուսուցման վերաբերյալ ուսումնական առարկաներն ավտոմատ համակարգեր են և չեն բավարարում ժամանակի պահանջներին :Ներկայումս առարկայական ինտեգրման մուտքը կրթական համակարգ թույլ է տալիս լուծել դպրոցի և ընդհանրապես հասարակության առջև դրված խնդիրները : Ինտեգրված ուսուցումը դպրոցական ուսուցման արդյունավետ եղանակ է , որը կիրառելի է հանրակրթության բոլոր աստիճաններում , սկսած ամենացածրից՝ կրտսեր դպրոցից:

Երեխայի մեջ վաղ ձևավորվում է <<իր աշխարհի պատկերը >> . նա պատրաստվում է աշակերտ դառնալ՝ աշխարհի մասին բավականաչափ պատկերացումներ ունենալով իր համար ընթերցած գրքերից, մեծահասակների պատմություններից , զանգվածային տաղեկատվության միջոցներից, հասակակիցների հետ շփումից և հաղորդակցությունից և այլն: Կարելի է վիճել , թե ո՞րն է ավելի լավը՝ գիրքը, թե հեռուստացույցը: Կարելի է անվերջ խոսել տեղեկատվության տարբեր միջոցների մատչելիության մասին : Բոլոր դեպքերում պարզ է , որ այդ ամբողջ տեղեկատվությունը խայտաբղետ խճանկար է :Դրա վառ օրինակներն են այն մանկական պատասխանները, որոնցում անհավանական կերպով համադրվում են մանրամասներ, անուններ , տարբեր բնույթի իրադարձություններ: Մեծահասակները դա <<շփոթ>> են անվանում , որը գտնվում է երեխայի գլխում: Նրանք չեն փորձում հասկանալ, բացատրել (թեկուզ սխալ) դրանց առաջացման պատճառները: Դա կապում են բացառապես երեխայի ցածր մտավոր կարողությունների հետ: Սակայն իր անկատարությամբ հանդերձ՝ այս երևույթն ունի մեկ կարևոր առավելություն՝ ամբողջականությունը: Դպրոց հաճախելու հենց սկզբից այդ ամբողջականությունը խախտվում է առանձին առարկաների միջև <<գծված>> սահմաններով: Արդյունքում երեխայի ձեռք բերած գիտելիքները քիչ են համակցվում միմյանց: Առարկաների և դրանց բովանդակության փոխադարձ կապերի բացակայությունը հանգեցնում է այնպիսի արդյունքի, երբ սովորողները ոչ միշտ են ամբողջությամբ ընկալում ուսումնական նյութը:

Սուխոմլինսկին գտնում է .<<Մանկության ամեն մի օրը մի նոր բան է հայտնագործում շրջապատող աշխարհում: Ամեն մի նոր հայտնագործություն մարմնավորում է յուրաքանչյուր առարկայի՝ մյուս առարկաների հետ կապելով : Երեխաների համար պատուհան բացեք դեպի շրջապատող աշխարհը: Կարողացեք երեխայի համար շրջապատի աշխարհում հայտնագործել որևէ նոր բան, բայց դա կատարեք այնպես , որ կյանքի այդ պատառիկը երեխային երևա ծիածանի բոլոր գույներով >>: [4] Կրտսեր դպրոցում ինտեգրված ուսուցում կազմակերպելու համար կան և՛

[4] Սուխոմլինսկի <<Սիրտս նվիրում եմ երեխաներին>> Երևան, Լույս 1986թ., էջ 37

բարենպաստ, և՛ անբարենպաստ գործոններ: Դրանք էլ հենց որոշում են ինտեգրման մարտավարությունը: Անբարենպաստ գործոն է , երբ որոշ ուսուցիչներ դժվարանում են ինտեգրված բովանդակությունը շարադրել այնպես , որ այն հասկանալի ու հետաքրքիր լինի կրտսեր դպրոցականներին: Միևնույն ժամանակ գոյություն ունեն նաև այնպիսի գործոններ, որոնք հեշտացնում են այդ դժվարությունների հաղթահարումը: Դրանցից առաջինն այն է , երբ կրտսեր դպրոցում ուսումնական առարկաների հիմնական մասը (բացառությամբ 2-3 առարկայի) դասավանդում է դասվարը: Դա դրական գործոն է , որը հեշտացնում է ինտեգրված ուսուցումը: Բարենպաստ գործոն է նաև այն , որ ինտեգրումը երեխային իր մտավոր ներուժը զարգացնելու մեծ հնարավորություններ է ընձեռում: Որպես դպրոցական ինտեգրման հոգեբանական հիմնավորում կարելի է ընդունել Յու.Ա.Սամարինի զուգորդական մտածողության գաղափարը: Այդ գաղափարի էությունն այն է , որ ցանկացած գիտելիք զուգորդություն է , իսկ գիտելիքները ներկայացնում են զուգորդությունների ամբողջական համակարգ: Ինտոգրման անհրաժեշտությունը հիմնավորող մյուս կարևոր նկատառումը հենվում է մարդկային ուղեղի մասին կատարված հետազոտությունների վրա: Դրանք ցույց են տալիս , որ սովորելու համար ուղեղը որպես իմաստավորման ձև որոնում է մոդելներ ու փոխկապակցություններ: Եթե մարդը կապեր հաստատելով է սովորում , ապա ուսուցումն էլ անհրաժեշտ է կազմակերպել կապերի միջոցով:

Ինտեգրումը գիտակցված փորձ է , որը կապում է ուսումնական ծրագրի՝ նախկինում չկապակցված ոլորտները: Սակայն տարբեր բնագավառների և առարկաների մեխանիկական միավորումը դեռևս ինտեգրված դաս չի դառնում :Անհրաժեշտ է գերիշխող գաղափար, որի իրականացումը կապահովի անխզելի կապ և տվյալ դասի ամբողջականությունը:

Հոգեբանության և մանկավարժության գիտական հետազոտությունները մեզ հնարավորություն են տալիս պնդելու, որ ինտեգրման վրա հիմնված ուսուցումն ոչ միայն հնարավոր է , այլև անհրաժեշտ հատկապես կրտսեր դպրոցական տարիքում :

Ո՞ր հիմնահարցերի վրա պետք է ուշադրություն դարձնել ինտեգրված ուսուցման ժամանակ:[5]

1. Ուսումնառությունը և գնահատումն ավելի շատ գիտելիքի կիրառում են պահանջում , քան պարզապես փաստերի սերտումը:
2. Ուսումնառությունը պետք է կազմակերպել մարդու՝ ըմբռնելու կարողությանը համապատասխան. ինչպես ուղեղն է մոդելների ու կապերի միջոցով մշակում տեղեկատվությունը՝ շեշտը դնելով կապակցվածության վրա , այնպես էլ ուսումնառության ընթացքում աշակերտների ընկալման համար անհրաժեշտ է ստեղծել բազմաթիվ կապեր ու մոդելներ:

[5] Նախաշավիղ 5-6 2007թ. ,էջ 60

Հայտնի է , որ ամեն ինչ կյանքում փոխկապակցված է , և ոչինչ մեկուսի չի կարող գոյություն ունենալ : Այդպես էլ երեխաներն աշխարհն ընկալում են որպես մեկ ամբողջություն: Նրանք ակտիվ սովորողներ են , և ձգտում են ամբողջապես ճանաչել այն վայրը , որտեղ ապրում են : Նրանք իրենց գիտելիքները , կարողությունները , հմտությունները կառուցում են հասակակիցների , ծնողների , մեծահասակների հետ փոխհարաբերությունների , ինչպես նաև ֆիզիկական և հասարակական միջավայրի ակտիվ ուսունասիրության միջոցով: Կրտսեր դպրոցականները հետաքրքրասեր են , ունեն վառ երևակայություն , սիրում են փորձարկումներ կատարել , խնդիրներ առաջացնել և լուծել դրանք: Բոլոր երեխաներն էլ օժտված են այդ հատկություններով : Ուսուցչի խնդիրն է՝ ապահովել.

Տարիքային զարգացման չափորոշիչներին համապատասխան գործունեություն: Այս պահանջը ենթադրում է հենվել երեխաների ուժեղ կողմերի վրա և փորձել նրանց մեջ զարգացնել բոլոր ոլորտները՝ հասցնելով առավելագույն արդյունքի (շարժողական, խոսքի և հաղորդակցության, իմացական) :

Ապահովել որակյալ ուսուցում: Ինտեգրված ուսուցումը

- միջանկյալ կապեր է հաստատում առարկաների և երևույթների միջև
- օգնում է աշակերտներին տվյալ թեմայի շուրջ ձեռք բերել հիմնական գիտելիքներ, կարողություններ , հմտություններ:

Մանկավարժը պետք է հոգ տանի, որպեսզի

- թեման նպաստի աշակերտի երևակայության և ստեղծագործական մտածողության խթանմանը,
- թեմայի ուսումնասիրությունն անցկացվի այնպես, որ ապահովվի բազմամակարդակ մասնակցություն և միաժամանակ յուրաքանչյուր աշակերտի գործադրած ջանքերը պսակվեն հաջողությամբ,
- հնարավորություն ունենան համագործակցելու,
- հնարավորություն ունենան ավելացնելու իրենց գիտելիքները և փորձը՝ առարկաների , մարդկանց և իրենց շրջապատում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ:

Ինտեգրված ուսուցման արդյունքում աշակերտների մեջ ձևավորվում է՝

- ինքնուրույն մտածողություն ,
- քննադատական մտածողություն,
- նախաձեռնություն ,
- անձնական մտածողություն
- համագործակցություն, փոփոխությունների ճիշտ ընկալում:[6]

Ուսուցումը դառնում է ոչ թե վերարտադրողական,այլ ստեղծագործական:

Ինտեգրված դասերի նախապատրաստման և անցկացման մեթոդիկա

Ժամանակակից ինտեգրված պարապմունքներին ներկայացվող պահանջներն են.[7]

- նոր մեթոդների կիրառում
- համագործակցում
- ինքնարտահայտման խրախուսում
- հետադարձ կապ

Ինտեգրված դասի կառուցվածքը սովորական դասից տարբերվում է

հետևյալ առանձնահատկություններով.[8]

- հստակությամբ , ուսումնական նյութի սեղմությամբ,
- տրամաբանական փոխպայմանավորվածությամբ,
- ինտեգրված նյութի տեղեկատվության մեծ տարողությամբ:

Դասերի պլանավորման և կազմակերպման համար ուսուցիչը պետք է հաշվի առնի նաև հետևյալ պայմանները:

- Ինտեգրված դասին միավորում են տարբեր առարկաների գիտելիքներ: Դրա համար էլ խիստ կարևոր է ճիշտ որոշել ինտեգրված դասի գլխավոր նպատակը:
- Եթե ընդհանուր նպատակը որոշված է , ապա առարկաների բովանդակությունից ընտրում են միայն այն տեղեկությունները , որոնք անհրաժեշտ են դրա իրականացման համար:

Տարրական դպրոցում ուսուցման բարեփոխման , կատարելագործման նոր ուղղություններից մեկն ինտեգրված դասերի կազմակերպումն ու անցկացումն է : Առարկաների ինտեգրումը՝ նվազեցնելով բովանդակության և հմտությունների կրկնությունը , ավելի շատ սովորեցնելու հնարավորություն է տալիս: Դրանով միաժամանակ նոր պատկերացում է ձևավորում հիմնական հմտությունների նշանակության մասին: Տարրական ուսուցման օղակում ինտեգրումը հնարավորություն է տալիս իրականության տարբեր երևույթների լոկալ , մեկուսի դիտարկումից անցնել փոխկապակցված, համակարգված, ուսումնասիրության: Ինտեգրված դասերը խթանում են աշխարհի ամբողջական պատկերացման , բնության և մարդու միասնության ձևավորումը: Տարրական դասարաններում դրվում են մարդու կրթության ու դաստիարակության , բոլոր գիտելիքների ու կարողությունների

[6] Նախաշավիղ 5, 2013թ. ,էջ 35-37

[7] Նախաշավիղ 8 , 2012թ., էջ 38

[8] Նախաշավիղ 5-6 , 2007թ., էջ 61

հիմքերը: Այդ շրջանում են երեխաները նախապատրաստվում գիտելիքների համակարգված դասընթացների ուսումնասիրությանը: Դասը հետաքրքիր , աշխույժ , հաճելի ու բովանդակալից դարձնելու , այն ճանաչողական ու կրթադաստիարակչական տեսակետից հարստացնելու նպատակով ուսուցիչը դիմում է միջառարկայական կապերի օգտագործմանը , որի շնորհիվ բարձրանում է դասի արդյունավետությունը: Նշանակալի է առարկայական ինտեգրման դերն ընդհանուր ուսուցման և երեխաների զարգացման գործում : Բազմակողմանի զարգացած , մտածող անձնավորության ձևավորման համար կարևոր նշանակություն ունեն տարբեր գիտությունների , երևույթների միջև գոյություն ունեցող կապերի ճանաչումը , դրանց համադրումն ու օգտագործումը: Առարկայական ինտեգրումը դասի նպատակին հասնելու միջոց է : Այն նպաստում է նոր նյութի խորքային յուրացմանը , անցածի և անցնելիքի միջև տրամաբանական կապերի ստեղծմանը , ձեռք բերած գիտելիքների ու կարողությունների փոխանցմանն ու կիրառմանը: Դասի ընթացքում միջառարկայական կապերն օգտագործվում են և՛ խթանման, և՛ իմաստավորման, և՛ կշռադատման փուլերում:

Ինտեգրումը գործադրվում է երեք եղանակով:[9]

1. Ուսուցման գործընթացում անդրադարձ կապերի օգտագործում. նոր դասը բացատրելիս ուսուցիչը դիմում է արդեն անցած նյութերին ու դրանց օգնությամբ աշակերտներին մոտեցնում նոր նյութին: Դրանով վերջինիս մատուցումը նախապատրաստվում է հնի միջոցով:
2. Գիտելիքների ու կարողությունների փոխանցում. ուսուցման նախորդ փուլում յուրացվածը պետք է ընկած լինի հաջորդ փուլի հիմքում՝ որպես դրա նյութական ու տեսական ելակետ:
3. Այլ գիտությունների տվյալների կիրառումն ուսուցման գործընթացում. այժմ չկա որևէ ուսումնական առարկա , որ դասավանդվի մյուս առարկաներից ու գիտություններից տարանջատված: Բոլոր գիտություններն էլ կապված են միմյանց և փոխազդեցությունների ու շփումների եզրեր ունեն: Այդ տեսակետից լայն հնարավորություններ է ընձեռում մայրենիի ուսուցումը: Մայրենիի դասերին աշակերտների մեջ նախնական հասկացություններ են ձևավորվում տարբեր գիտությունների , արվեստի ձևերի , մարդկանց ու պատմական իրադարձությունների , տեխնիկայի ու այլ հարցերի վերաբերյալ: Մեծ տեղ է հատկացվում նկարչությանը , երաժշտությանը , ֆիզդաստիարակչությանը: Տարրական դասարաններում է կայանում երեխաների առաջին ծանոթությունը խոսքարվեստին: Այստեղ են նրանք առաջին անգամ առնչվում թատերական արվեստի տարրերին , տեղեկություններ ստանում քանդակագործության, ճարտարապետության , գիտության

[9] Նախաշավիղ 5-6 2007թ., էջ 39

և տեխնիկայի նվաճումների, աշխարհագրության , բնագիտության իրավական և աշխատանքային դաստիարակության հիմունքների վերաբերյալ:

Ինտեգրված ուսուցմամբ դասապրոցեսի իրականացումը բնութագրվում է մի շարք օրինաչափություններով : Դրանցից են՝

- դասապրոցեսն ընթանում է ըսը մանկավարժի հեղինակային մտածողությամբ իրականացված սցենարի ,
- դասապրոցեսի բոլոր փուլերն ու բաղադրիչները տրամաբանորեն կապված են և ծավալվում են առանցքային թեմայի շուրջ,
- դասի համար ընտրված դիդակտիկ նյութերի շղթայում դասագրքային և լրացուցիչ գրականության հասկացություններն ու գաղափարները համադրվում են միմյանց,
- դասապրոցեսն անց է կացվում ինչպես մեկ , այնպես էլ ավելի ուսուցիչների մասնակցությամբ , որոնք կարող են հանդես գալ որպես խորհրդատու –մանկավարժներ:

Ինտեգրված ուսուցման իրականացման արդյունքում սովորողների համար պայմաններ են ստեղծվում կիրառելու իրենց գործնական հմտությունները, ինքնադրսևորվելու ՝ միաժամանակ ձեռք բերելով կայուն գիտելիքներ: Վերջինս նպաստելու է հարմարվողական ընդունակությամբ, ճկուն մտածողությամբ օժտված անհատների ձևավորմանը , քանի որ ըստ Վ. Կումարինի՝ <<Դպրոցի և ընդհանուր կրթության համակարգի փրկությունը մրցունակ կադրերի պատրաստումն է , որը բնահարմարվող անհատ ձևավորող մանկավարժության խնդիրն է >>:

Կրթության կարևորությունը գնահատելով ՝պետք է ընդունենք , որ կրթության միջոցով կարելի է հասնել հասարակական մտածողության , հոգևոր- բարոյական և մշակութային արժեքների զարգացման : Ինտեգրված ուսուցումը նպաստելու է հետազոտական հմտությունների , ստեղծագործական կարողությունների ձևավորմանը և դրանց հիմքի վրա նրանց կայուն զարգացման իրականացմանը: Ըստ Ն.Ն.Մարֆինինի ՝ կայուն զարգացումը կյանքի կազմակերպման այն ոճն է , երբ հիմնախնդիրների լուծումից անցում է կատարում դեպի հակամարտությունների կանխատեսում , գործողությունների պլանավորում ՝ ուղղված դրանց հաղթահարմանը կամ թուլացմանը: Սա դառնալու է կրթության որակի բարձրացման և նոր հասարակության ձևավորման հիմնական գրավական:

Հետազոտական մաս

Հետազոտական աշխատանքը կատարվում է 6-7 տարեկան սովորողների շրջանում : Հետազոտմանը մասնակցում են 21 աշակերտ ՝ 13 աղջիկ ,8 տղա: Դասի նպատակն է միջառարկայական կապերի օգտագործումն նախաայբբենական շրջանում: Դասի թեման է <<Այգի>> (Վ.Սարգսյան <<Այբբենարան>> էջ 29): [10]



Աշակերտներին առաջադրվում է դիտել նկարը , որը սովորողներից պահանջում է ուշադրության կենտրոնացում, արագ կողմնորոշվելու ունակություն: Նախապատրաստական զրույցի ընթացքում խոսվեց քաղաքի և գյուղի , դրանց տարբերությունների և նմանությունների մասին: Երեխաները թվարկեցին քաղաքների և գյուղերի անուններ: Նրանք սովորեցին այգին զանազանել պարտեզից ,բանջարանոցից և անտառից: Նշեցին տարվա եղանակները, աշնան ամիսները: Վառ գույներով բնութագրեցին աշնան գույներն ու տրամադրությունները: Կատարեցին << Աշուն տատիկը>> երգը : Թվարկեցին մրգերի անուններ, դրանց վերագրեցին հատկանիշներ, ցուցադրեցին իրենց նկարած մրգերը, գուշակեցին մրգերին վերաբերող հանելուկներ: Երեխաները արտահայտվեցին մրգերի օգտակարության , վիտամիններով հարուստ լինելու մասին: Հենց իրենք նշեցին , որ չի կարելի ուտել մրգերն ու բանջարեղենը առանց լվանալու: Ընդգծեցին այն ճշմարտությունը , որ այգին առատ բերք է տալիս մարդկանց աշխատասիրության և խնամքի

[10] Վ.Սարգսյան <<Այբբենարան>> Երևան 2018թ., էջ 29

շնորհիվ: Հետևաբար ՝ հանգեցին այն եզրակացության , որ պետք է սիրել ու պահպանել բնությունը: Ըստ ընտանիքի անդամների թվի ՝ կռահեցին ,թե քանի ափսե պետք է դնի սեղանին մայրիկը: Հաշվեցին նաև արևածաղիկները, տները, կենդանիները: Դրանց քանակները համեմատեցին միմյանց հետ:Երեխաները կարողացան տարբերակել թե նկարում ինչն է ամենաբարձրը, ցածրը, մեծը, փոքրը, շատը, քիչը, մոտիկը, հեռուն և հավասար իրերը: Որոշեցին , թե տունն ինչպիսի՞ երկրաչափական պատկերներից է կազմված: Հաշվեցին իրենց զրույցից առանձնացված նախադասությունների , բառերի ու դրանց մեջ առկա վանկերի քանակը: Դիտելով նկարը ,երեխաները նկատեցին ,որ բոլորն են աշխատում՝ բացի պապիկից ու փոքրիկ Հայկից: Պարզաբանեցին , թե ինչու՞ է այդպես : Հասկացան , մարդն ունի աշխատանքի և հանգստի, առողջության պահպանման իրավունք: Պարզեցին, որ նա ունի նաև պարտականություններ ՝ աշխատել, հարգել մեծերին , օգնել փոքրերին, պահպանել բնությունը, սիրել հայրենիքը և այլն: Երգեցին <<Արթնացի՛ր, փոքրի՛կ>> երգը: Երգի միջոցով աշակերտներն հասկացան , որ ծուլությունը չարիք է : Սովորեցին աշխատասիրության վերաբերյալ ասացվածքներ : Խոսեցին փոխադրամիջոցների , դրանց տեսակների մասին : Աշակերտները սիրով բեմականացրեցին այն տեսարանը , երբ մայրիկը սեղանի մոտ է հրավիրում բոլորին: Խոսեցին ընտանիքի , սիրո, համերաշխության , հոգատարության, նվիրվածության մասին: Բնութագրեցին շնիկին ու կրիային: Նշեցին դրանցից յուրաքանչյուրի լավ և վատ վատկանիշները : Խոսեցին ընտանի և վայրի կենդանիների մասին : Մնջախաղով ներկայացրեցին կենդանիներ և թռչուններ, նմանակեցին դրանց արձակած ձայները: Վերջում կատարեցին <<Հաֆ- հաֆիկ>>երգը: Երեխաներին բացատրվեց ,որ պետք է հոգատար լինել ոչ միայն մարդկանց , այլև կենդանիների և թռչունների նկատմամբ:

Բոլոր երգերի կատարումներն ուղեկցվում էին լիցքային վարժություններով:

Ահա այս եղանակով էլ դասի ընթացքում կիրառեցինք նկարչության , երաժշտության , աշխարհագրության , բնագիտության , մաթեմատիկայի , խոսքարվեստի, թատերական արվեստի տարրեր, որոշ տեղեկություններ հաղորդեցինք տեխնիկայի նվաճումների , քաղաքացիական և իրավական դաստիարակության վերաբերյալ: Դասի ընթացքում կատարվեց անհատական , խմբային, զույգերով աշխատանք, կիրառվեցին հետազոտական , դերային խաղեր, ստեղծագործական գործունեություն, արթնացան երեխաների ճանաչողական հետաքրքրությունները, զարգացան համագործակցային կարողությունները և հաղորդակցման ունակությունները, բացահայտվեցին յուրաքանչյուր աշակերտի անհատական առանձնահատկությունները, զարգացավ տրամաբանական մտածողությունը:

Եզրակացություն

Այսպիսով ՝ բովանդակալից են և նպատակաուղղված ինտեգրված դասերը: Դրանք՝ [11]

- դպրոցական ուսուցման ավանդական կառուցվածքի մեջ ներմուծում են նորույթ , ինքնատիպություն և որոշակի առավելություններ,
- նպաստում են աշխարհի գիտական պատկերի ամբողջականության ձևավորմանը,
- հնարավորություն են ընձեռում առարկան կամ երևույթը զննել , դիտարկել մի քանի կողմերից՝ տեսական , գործնական, կիրառական
- ձևավորում են ճանաչողական հետաքրքրություն, որը բարձրացնում է ուսուցման մակարդակը,
- նպաստում են բանավոր և գրավոր խոսքի զարգացմանը , բառի իմաստային նշանակության և գեղագիտական էության ընկալմանը,
- նպաստում են երաժշտական կարողությունների զարգացմանը,
- հնարավորություն են տալիս համակարգել գիտելիքները,
- ի տարբերություն ավանդական դասերի ՝ նպաստում են սովորողների գեղագիտական ընկալման , երևակայության , ուշադրության , հիշողության , մտածողության (տրամաբանական , գեղարվեստական- պատկերավոր , ստեղծագործական), առավել զարգացմանը:

Ամփոփելով նշենք, որ ինտեգրված ուսուցման միջոցով դասի գործընթացի կազմակերպումը մանկավարժին հնարավորություն և տալիս իրականացնել նպատակաուղղված աշխատանք՝ դրդելով սովորողներին կատարել տրամաբանորեն շաղկապված գործողություններ ՝ համեմատում , ընդհանրացում, համադրում, զուգորդում, դասակարգում, վերլուծում:Նշված գործողությունները ապահովում են հաղորդվող նյութի լիարժեք և բազմաշերտ ընկալումը՝ ընդլայնելով սովորողների պատկերացումների շրջանակը, ուսուցման գործընթացը դարձնելով ավելի հետաքրքիր: Իսկ ուսուցման գործընթացի նկատմամբ հետաքրքրության առաջացումը ինքնին նպաստում է սովորողների ուսման դրդապատճառների ձևավորմանն ու զարգացմանը , որը հանդիսանում է արդի կրթական համակարգի հիմնախնդիրը:

Ինտեգրված դասերի անցկացումը խթանում է ուսուցչի մասնագիտական վարպետության աճը , քանի որ այս դեպքում նրանից պահանջվում է ուսումնադաստիարակչական գործընթացի նոր տեխնոլոգիաների մեթոդիկաների հստակ տիրապետում:

[11] Նախաշավիղ 5-6 2007թ., էջ 62

Օգտագործված գրականության ցանկ

1. Սուխոմլինսկի <<Սիրտս նվիրում եմ երեխաներին >> Երևան, Լույս 1986թ.
2. Մ.Դավթյան <<Ինտեգրված ուսուցման մոտեցումներ կամ ուսուցման ծրագրերի ինտեգրման մոտեցումներ >>, Մանկավարժություն , 2003թ, № 2-3
3. Ա.Աբրահամյան ,Ժ.Ֆարսյան <<Միջառարկայական կապերի մի քանի ընդհանուր հարցեր>> գիտական հոդվածաշար III , Երևան , <<Զանգակ 97>> 2003թ. ,
4. Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան , 2004թ. ,
5. Վ. Ա. Սարգսյան <<Այբբենարան>>, Երևան 2018թ. ,
6. Նախաշավիղ 2001, 3-4
7. Նախաշավիղ 2007, 5-6
8. Նախաշավիղ 2012, 1
9. Նախաշավիղ 2013, 5